

ՌՈՒՍԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Պետական ելմտացույցը 1892 թ. Պետական առևտրական հաշվեկշիռը 1891 թ. Սովբ 17 ներքին նահանգներում Օժանդակութիւններ և նպաստներ Սով թէ կա-
րօտութիւն, Կտեմարան և գեմետու Խարդախութիւններ հասցի առևտուրի մէջ,
Հասարակական աշխատութիւններ Բժիշկներէ թիւը Ռուսաստանում, Հոգևոր
ուսումնաբանները Ռուսաստանում ԱնՀատի իրաւունքներէ պաշտպանութիւնը
և դատաստանական գործերը Ռուսաստանում 1861—1871. Մուքացկանները Ռու-
սաստանում

«Ռուսական քրոնիկ» վերնագրի տակ մենք կ'աշխատենք կարելիին
չափ պարբերաբար, գէթ ամիսը մի անգամ, «Մուրճ»-ի ընթերցող-
ներին հաղորդել ռուսական կեանքին վերաբերեալ կարևորագոյն ֆակտերը,
պետական, տնտեսական, սոցիալական, գրական սփերաներից, ձգտելով
աղպիսով մեր կարողութեան չափ լրացնել «Մուրճ»-ի մէջ այն պակասը,
որի կարևորութիւնը ամսագրի խմբագրութիւնը վաղուց զգացել է: Սակայնք
այս տեսութիւնը ալն բանից, որ, թէև միայն չոր թւերի միջոցով իւր մէջ
պարունակում է Ռուսաստանի բովանդակ կեանքը, Դա պետական ելմտա-
ցույցն է:

Ահա 1892 թ. Պետական համառօտ ելմտացույցը, որի մանրամասնու-
թիւնը գտնուում է նախընթաց երեսի վրա.

Սովորական հասոյթներ . . . 886.544,325 ռուբլի

Արտակարգ հասոյթներ . . . 4.490,366 »

Երկուսի գումարն է . . . 891.034,691 ռուբլի

Սովորական ծախքեր . . . 893.668,066 »

Արտակարգ . . . 71.635,000 »

Ծախքերի գումարն է . . . 965.303,066 ռուբլի

Աղպիսով ելքից հանելով մուտքը կը ստանանք 74.268,375 ռուբլու
մի բաց (дефицитъ) ներկա տարւոյ համար:

Եթէ համեմատելու լինենք այս թւերը նախորդ տարիների հաշու-
կշիռների հետ կը տեսնենք որ ներկայ տարւոյ բացը զգալի կերպով խո-
շորացել է:

1889 թ. պակասը	24.320,059 ռուբլի էր,
1890 թ. » 	42.738,348 »
1891 թ. » 	53.794,812 » և
1892 թւին սպասուած է .	74.268,375 ».

Մինչդեռ 1890 թ. պետական հասոյթների գումարը հասնում էր
905 միլիոն ռուբլու և 1891 թ.՝ 908¹/₂ միլիոն՝ ներկայ տարւանը
առաջինից 14 միլ. ռուբլով է պակաս և երկրորդից 17¹/₂ միլ. ռուբլով:
Բայց եթէ աւելացնենք այդ թւերի վրա այն 20 միլ. ռ. որ մտցրած է
առաջին անգամ ներկայ տարւոյ հասոյթների մէջ իբր սպասուող հասոյթ
պետութեան ձեռքը անցած մի քանի երկաթուղիներից ¹⁾—այն ժամա-
նակ այդ թւերը կը դառնան՝ առաջինը 34 միլ. և երկրորդը 37¹/₂ միլ.:
Եւ այս ահադին դաճադաճութիւնը առաջ է եկել նրանից որ սովը ճարա-
կել է Ռուսաստանի ներքին դաւառները, որոնցից և սպասուած է հասոյթ-
ների այս պակասը:

Զը նալած այն հանգամանքին, որ այս նախահաշիւը (նման իւրպէս-
ներին) կաղմած է տեղեակ հաստատութիւնների ձեռքով, այն է Ֆինանս-
ների մինիստրութիւնից, Պետական կոնտրոլից և Պետական խորհրդի
պետական էկոնոմիայի դեպարտամենտի կողմից,—այնոչ ամենալին հարց
է թէ մինչ որ աստիճան ստորդ է իրագործուելու այս նախահաշիւը. և
իրաւ՝ փորձը ցոյց է տւել որ նախընթաց նախահաշիւներից շատ շատերը
բոլորովին հակառակ ելք են ունեցել քան ինչ նախագծւած է կղել: Այս-
պէս օրինակի համար 1888 թւին նախատեսւած էր սովորական հասոյթ-
ներից 4 միլիոնի մի բաց, մինչդեռ տարւոյ վերջում 58 միլիոնի աւելորդ մի
գումար գոյացաւ: 1889 թւին նախատեսւած 4¹/₂ միլիոն աւելորդ գու-
մարի փոխարէն ստացւեց 69 միլիոն, իսկ 1890 թւի 1¹/₂ միլիոնի փոխա-
րէն գոյացաւ 66 միլիոն: Այս իրողութիւնները պարզ ցոյց են տալիս, որ
նախահաշիւները ճշգրտապէս չեն իրագործուած:

Ներկայ սովի տարւոյ պետական նախահաշիւը անցեալ 1890 տար-
ւոյ (երբ դեռ սովը չէր լալտնւել) հետ համեմատելիս նկատուած է խոշոր
պակասներ հետեւեալ 3 կարգի հասոյթների. առաջին՝ նախկին կալածա-
տէրերի (ПОМѢЩИКЪ) և նախկին պետական գիւղացիների հողեր ետ դնելու
վճարներից (ВЫКУПНЫЕ ПЛАТЕЖИ), երկրորդ՝ խմիչքեղէնից և վերջապէս
մաքսերից:

Առաջին կարգի՝ այն է հողեր ետ դնելու վճարների հասոյթը հաշւած էր

1) Կուբսկ—Խարկով—Ադուէան և Լիբաւա—Ռոմենեան:

1890 թվին 88 միլիոն ռուբլի, 1891 թ.—98 միլիոն, իսկ ներկայ 1892 թ. համար հաշված է միմիայն 74 միլ. ռուբլի, Երկրորդ կարգի հասոցները՝ ալն է խմիչքեղէնինը պակասեցրած է մինչև 242¹/₂ միլ. ռ. (26 միլիոնով պակաս քան 1890 թ.) և վերջապէս մաքսերից 31 միլ. ռ. պակաս է սպասուում քան 1891-ին՝ ալն է 111 մ. ռ. (1891—142 միլ.): Նախահաշւի ալս զգուշութիւնը շատերը չափազանց են գտնում՝ կարծելով որ 17 սովնալ նահանգները արդարի ահագին պակասներ չեն պատճառել, եթէ աչքի առնել որ արդ նահանգներում մինչև օրս նպատտի համար բաժանւած 140 միլ. գումարի մի մասը էլի ետ կը գալ պետութեան գանձարանը:

Համեմատաբար անցեալ տարւալ նախահաշւի հետ աւելացած են՝ Ծովալին մինիստրութեան հաշւում 7 միլ. ռ., Ներքին գործերի մինիստրութեան հաշւում՝ 4¹/₂ միլ., Զանապարհների հաղորդակցութեան մինիստր. հաշւում՝ 7 միլ., Արդարադատութեան մինիստր. հաշւում մօտ 2 միլ. ռ. Պետական պարտքերի տոկոսների վճարը հաշված է 248 միլ. ռուբ. մինչդեռ 1890 թ. արդ գումարը հասնում էր 261¹/₂ միլ. իսկ 1887 նոյն գումարը հասել էր իւր գագաթնակէտին ալն է 281 միլ. ռ.: 33 միլ. ռուբլու խնայողութիւնը առաջ է եկել գլխատրապէս ալն հանգամանքից, որ պետութեան տոկոսի չափսը իջեցրած է վերջին երկու երեք տարւալ կոնւերսիալի ¹⁾ շնորհիւ:

Պետական ծախքերի տարեցտարի աճող գումարները ծածկելու համար տէրութիւնը վերջին տարիներս դիմում էր զանազան միջոցների՝ առանց որ և է մի բացի (կամ թեթև մի բացով) պետական հաշակչիւր փակելու համար:

1879 թ. մաքսերի հասոցը հասնում էր մօտ 61 միլ. ռ.: Այդ տարւանից սեղի են ունեցել մի շարք նոր կարգադրութիւնները, որոնց շնորհիւ մաքսերը աւելացրած են մինչև ներկայ տարւալ սկիզբը մօտ 60%: Սակայն թւերը պարզ ցոյց են տալիս որ մաքսալին հասոցները արդ չափսերով չեն առաջ գնացել—ալ շատ պակաս: Այսպէս

1880 թ. դրանք հասել էին . . .	65	մ. ռուբլու
1889 թ. " " " . . .	80	մ. "
1890 թ. " " " . . .	82 ¹ / ₂	մ. "

Ասել է թէ միմիայն մօտ 25% (ալն է 17¹/₂ մ.):

1883 թ. առաջին անգամ նշանակւած տուրքը ձրի (նւէրներով, մառանգաբար) ձեռք բերող կալքերից—1890 թվին հասել էր 4 միլ. ռուբլու:

¹⁾ Կանվերտ—այն գործողութիւնն է որով տէրութիւնը իւր պարտքերի տոկոսների չափսը իջեցնում է: (Օրինակ՝ եթէ պարտք էր վերցրել 50%—ով, նա յայտարարում է որ այսուհետև նոյն այդ պարտքը նա վճարելու է 4¹/₂—40% կամ աւելի պակաս):

1885 Նշանակած նոր 5% տուրքը տոկոսարեր թղթերի տոկոսներին—1890 թվին հասաւ 11 $\frac{1}{2}$ մ. ու. և ալլն:

Արտակարգ ծախքերը ծածկում են սովորական հասոյթներից—քանի որ արտակարգ հասոյթներ սպասւում են միմիայն մօտ 4 $\frac{1}{2}$ մ. ու.:

Ներկայ տարում կը սպաււի ալն պահեստի գումարը որ գտնւում էր Պետական գանձարանում (Государственное казначейство) և որը՝ հաւաքւելով 1888/90 տարիների միջոցին՝ հասել էր 219 մ. պատկառելի գումարի: Այդ գումարից է տրւած օժանդակութիւն սովեալ նահանգներին անցեալ տարի մօտ 70 միլ. և ներկայ 92 թ. պիտի տրւի նոյնքան: Նոյն 219 մ. վերոյիշեալ պահեստից պիտի ծածկւի թէ անցեալ տարւալ եղած և թէ ներկայ տարւալ սպասելի բացերը:

*
* *

Անցնենք ալժմ Ռուսաստանի ալսպէս ասած առևտրական հաշւեկշիւին: Բաց նախ երկու խօսքով վիշեցնենք որ մի որ և է երկրի արդիւնաբերութիւնները և արդիւնագործութիւնները համախարհային շուկայի հետ կապելու, չարաբերութիւնների մէջ դնելու համար կան երկու ուղղութիւններ, երկու սխտեմներ: Սրանցից մէկը լինւում է աղատ մրցումի վրա—միւսը մաքսերի օգնութեան է դիմում: Երկու սխտեմներն էլ ունեցել են և շարունակում են ունենալ իրանց պաշտպանները:

Ռուսաստանը ղեկավարւում է երկրորդ սխտեմով, ալսինքն դիմում է մաքսերի՝ «աղղալին» արդիւնագործութիւնը ոտի վրա դնելու և ոտի վրա պահպանելու համար:

Արդ՝ 1891 թ. (բացի ղեկտեմբեր ամիսը) համառուական առևտուրը արտասահմանի հետ հետեւեալ թւերով է արտաչալտւել. ապրանք է արտահանւած 682 միլ. ռուբլու իսկ ներմուծւած է միմիայն 342 մ. ռուբլու:

Եթէ հաւատանք պրոտեկցիոնիստներին (մաքսականներին) պիտի եզրակացնենք ալսպէս. որովհետև Ռուսաստանը անցեալ 91 թ. 340 մ. ու. աւելի (682—342) է ստացել ծախած և առած ապրանքներից, ուրեմն նա ալդ գումարով հարստացել է, ալդ գումարը Ռուսաստանի մէջ է մնացել և որ ուրեմն Ռուսաստանի տնտեսական դրութիւնը հիանալի է:

Արդեօք սխալ չէ ալս և զրակացութիւնը որ անում են ամենալն սիրով պրոտեկցիոնիստները: Պրոտեկցիոնիստների հոկառակորդները ասում են՝ վիշեցէք 1875 թ. երբ Ռուսաստանը ներմուծել էր 140—150 միլ. ռուբլու աւելորդ ապրանքներ, քան ծախել էր և սակալն ալդ թւին թղթադրամ ռուբլու արժողութիւնը սա էր՝ 1 ու. 15 կ. թխթադրամ միջին թւով արժէր 1 ու. ոսկի: Սորա հակառակ վիշեցէք 1888 թիւը երբ արտահանւածի և ներմուծւածի տարբերութիւնը լօզուտ առաջինի հասել էր 400 մ. ու. և ալնուամենայնիւ 1 ու. 72 կ. թղթադրամը արժէր 1 ու. ոսկի:

Եթէ պրոտեկցիոնիստները աղբիւրը թէ երկիրը աղքատանում է եթէ անկի մեծ գումարի է ապրանք ներմուծում քան արտահանում՝ ուղիղ է, ճիշտ է—ապա Ֆրանսիան և Անգլիան վաղուց արդէն պիտի չքացած լինէին: 1885 թւից մինչև 1890 Ֆրանսիան օտար երկիրներէն ներմուծել է $20\frac{1}{2}$ միլիարդ ֆրանկի ապրանք, իսկ արտահանել է $16\frac{1}{2}$ միլիարդ ֆրանկի: Եթէ միայն այս թւերով գոհանալինք, պիտի եզրակացնէինք թէ Ֆրանսիան աղքատացել է կորցնելով 5 տարում 4 միլիարդ, մինչդեռ չափն է որ թանգագին մետաղներ ներմուծել և մնացել են Ֆրանսիայում վերջին 5 տարիներում վաթսու միլիոն ֆրանկ անկի քան արտահանել:

Նոյնը ներկայացնում է Անգլիան, բայց անկի խոշոր թւերով. ներմուծածի և արտահանածի տարբերութիւնը հասնում է ամենալն տարի մօտ 4 միլիարդ պատկառելի մի գումարի: Այս պերճախօս թւերը ապացուցանում են որ սխալ է պրոտեկցիոնիստների ալն սկզբունքը, որով նրանք մաքսերի ուժով արգելում և դժարացնում են օտար ապրանքների մի երկրի մէջ մտնելը՝ կարծելով թէ դրանց վճարելիք արժէքները կը մնան երկրի մէջ և երկիրը հէնց դրանով կը հարստանալ: Կարծես ներմուծող ապրանքները հէնց որ նրանց արժէքը վճարեց և արձանագրուց «Առևտրական հաշեկշռի» մէջ—կորցրին իրանց արժողութիւնը. կարծես թէ հաշի է առնւում ոչ թէ արժէք ունեցող իրը, ապրանքը, այլ միմիայն նրան ձեռք բերելու արժողութիւնը: Եւ եթէ Անգլիան, օրինակի համար ներմուծում է 4 միլիարդով անկի ապրանք, կարծես նա վճարում է ալը 4 միլիարդը և փոխարէնը ոչինչ չէ ստանում. կարծես թէ ալը 4 միլիարդի ապրանքը զրով արժողութիւն է և ոչ թէ 4 միլիարդ ֆրանկի արժողութիւնը...

Պրոտեկցիոնիստ մաքսատէրները դիմում են մաքսի ոչ թէ միայն տեղական արդիւնագործութիւնը ոտքի կանգնեցնելու և ոտքի վրայ պահպանելու համար, այլ նաև ալն դէպքերում երբ հարկաւոր է ալը «առևտրական հաշեկշռում» (չաջող դրութեան մէջ) պահպանել:

Օրինակի համար. օտար շաքարի վրա մաքսը ալնքան բարձր է, որ տեղականը արդէն կարգի է ընկել և Ռուսաստանում օրինակելի գործարաններում օրինակելի շաքար է պատրաստւում:

Կարելի էր կարծել որ հասնելով իրանց նպատակին, որ է զարգացնել տեղական արդիւնագործութիւնը, մաքսերը կը թեթևացնէին կամ իսպառ կը վերացնէին: Քաւ լիցի՝ մաքսերը պահպանւում են, բայց որպէս զի արտահանութիւն լինի (առևտրական հաշեկշռում արտահանած գումարները խոշորացնելու մտքով), շաքարի գործարանատէրներն վերադարձնում է նրանցից չօգուտ պետական զանձարանի ստացած սկզիղը—եթէ ալը գործարանատէրերը արտահանելու լինեն իրանց շաքարից օտար երկիրներ: Ներկալ տարալ համար ալը նպատակին չատկացած է $3\frac{1}{2}$ միլիոն ռուբլի և ալը գումարով օտար երկրացիք անկի էժան շա-

քար կը տառնտն քան Ռուսաստանի բնակիչները: Ասել է թէ Ռուսաստանի գործարանատէրերը ներկայումս ամբողջովն սխալմամբ հովանաւորութեամբ աշխատում են բարեգործական նպատակով, այն է օտարներին աւելի էժան չաքար մատակարարել քան իրա Ռուսաստանի սեփական հպատակներին: Մինչդեռ մաքսերը միջոց են տւել չաքարագործարանատէրերին աղբ գործը հիմնել, զարգացնել և հարստանալ ¹⁾: Ներկալ հանգամանքներում օգտւում են օտարները և չաքարագործարանատէրերը, որոնք իրար հետ պայմանաւորուելով թէ չաքարի գինը նշանակելում են թէ չաքարի որոշ քանակութիւնը պատրաստելում՝ դառնում են աղբ գործի մենաշնորհը վաւելողները, մոնոպոլիստները: Մինչդեռ անկասկած է որ եթէ չաքարի ակցիզը չափաւոր կերպով պակասացնէր—չաքարի արդիւնագործութիւնը չէր վտանգւել, Ռուսաստանի բնակիչները աւելի էժան չաքար կ'ունենային, իսկ գործարանատէրերը իրանք իրանք օտար շուկաներ կ'որոնէին: Սակայն պրոտեկցիոնիստները ալսօրալ օրս զօրեղ են և աղբ է պատճառը որ նոյն ձևը ուղում են լարմարեցնել նաև բամբակեղէնի վրա, այն է վերադարձնել գործարանատէրերին բամբակի համար ներմուծելիս վճարած մաքսը—եթէ նրանք արտահանելու լինեն օտար երկրներ այն բամբակից պատրաստած չիթ և այլ նման ապրանքներ...

Ռուսաստանի 17 ²⁾ ներքին սովնալ նահանգների գրութիւնը վաղուց լալտնի է ամբողջ աշխարհին:

Սովի ալսպէս ասած ամենաթոշնոյ ժամանակը երբ սովնալներին օգնութեան ձևք էին կարկառում թէ Ամերիկայից, թէ Ֆրանսիայից, թէ Անգլիայից, երբ Ռուսաստանի բոլոր փոքր ի շատէ մեծ քաղաքներում պարահանդէսներ, ներկայացումներ էին սարքւում ի նպատ սովնալների, երբ ռուս գործիչներից շատ շատերը անձամբ դնացին սովնալ նահանգները անձամբ օգնութեան գործը կանոնաւորելու և սոցա թևում և Տոլստոյը իւր զաւակներով երբ նոյն իսկ հալ ուսանողները հետնելով ընդհանուրի հոսանքին և օրինակ առնելով ռուս ամսագիրներին հրատարակութիւններից լոգոստ սովնալներին ³⁾ կամուցան իրանց լուծան ևս աւելացնել աղբ բարի

¹⁾ Յէշելու է նորերս վախճանւած չաքարագործատէր Խաբլոտնինկոյն որը 40 միլիոն ռուբլու կարողութիւն թողեց իւր ժառանգներին:

²⁾ Որոնք են՝ Արշոնեժէ, Վեստկայի, Կադանի, Կուրսկի, Նիժնեգորոդի, Օբենբուրգի, Օբլոմի, Պենզայի, Պերմի, Րեադանի, Սամարայի, Սաբատովի, Սիմբերսկի, Տամբովի, Տոբոլսկի, Տուլայի և Ուֆիմի նահանգները:

³⁾ Այդ նպատակով էր հրատարակւած «Кіевскій Сборник»-ը որի կազմում մասնակցեցին և օտարները՝ Լոտի, Զախեր Մազոս, Էրեքս, Նորդաու, Հէյդէ

Նպատակի համար մտածելով մի ժողովածու հրատարակել՝ ալդ կրիտիկական բուպէին Պետերբուրգի «Նովոստի» լրագիրը համարձակութիւն ունեցաւ եղած սովը անւանել «սուր կերպարանք առած սպորադիկական կարօտութիւն»։ Ի՞նչ ասել կողի որ սա վիճարանութեան և բանակուի խնդիր դարձաւ Այս հարցի հետ միաժամանակ հրապարակի վրա դուրս և շտեմարանների խնդիրը, Լրագիրները որոնում էին սովի պատճառները և ալս բանում մեղաւոր էին գտնում և զննւտւոն, որի պարտականութիւն-ներից մէկն է շտեմարաններ ունենալ, իսկ շտեմարաններում հաց՝ անակնկալ սովի առաջին առնելու համար։

Սակալն բանից դուրս է գալիս որ մամուլի պահպանողական մասը չարձակւելով զննատուի վրա իբրեւ ազատամիտների ջանքերի մի արդիւնքի՝ իսկապէս երևան հանեց որ ալդ գործը շատ անմխիթար է՝ կազմակերպւած։ Երաւ է զննատուներին է լանձնւած շտեմարանների գործը—սակալն ներկալ հանգամանքների մէջ զննատուի ուղարւաման փող բաժանւելով գիւղացիներիս՝ վերջիներին ընդհանուր երաշխաւորութեան գրաւականով (вруговая порука)—նոյն իսկ հուճնի ամենալոյող տարիներում չի կարողանում ետ ստանալ փոխ տւած ցորենները։ Այս մտքով շատ զննատուներ դիմել էին վարչութեան, բաւց գոհացուցիչ պատասխաններ ստանալով հանդերձ—իրանց նպատակին չեն հասել և ցրւած փողերը ետ չեն եկել։ Ուրեմն զննատւոն պարտաւորւած լինելով շտեմարանական գործում՝ զուրկ է անհրաժեշտ իշխանութիւնից ի կատար ածելու իւր պարտաւորութիւնները լիութեամբ։ Զննատւոն կարող էր տեղեկացնել վարչութեան թէ ամբարները դատարկ են և նա անդեկացրել է։

Գաւառական (губернская) ոստիկանութիւնը նահանգապետի ուղղակի իշխանութեան ենթարկւած լինելով՝ ամենից առաջ ջանում է ժողովել պետական տուրքերը և հասովքները, իսկ զննատուների կարգադրութիւնները իբրեւ մի ոչ ուղղակի իշխանութեան—ոստիկանութիւնը չի աշխատում կատարելու Մալիս 5-ի հեռագիրների համաձայն առաջարկւած է նահանգապետներին ճիշտ տեղեկութիւններ հաղորդել թէ արդեօք իրանց իշխանութեան լանձնւած նահանգները որքան տեղական ցորենի պաշար ունին։

Վերը մենք վիշցինք Լև Տոլստոյի անձնական մասնակցութիւնը սովեակներին օգնելու գործում։ Ահա թւեր նորա գործունէութեան վերաբերմամբ։ Ռուս նւիրատուներից մինչև ալս տարւալ ապրիլի 12-ը նա ստացել է 96.560 թուրքի, Բացի ալդ ստացել է նա Ամերիկայից մօտ 28,000 Անգլիայից մօտ 16.000, Ֆրանսիայից 1.400, Գերմանիայից 759 թ.,

և ուրիշները։ Նմանօրէնակ ժողովածուներ են հրատարակել Русская Мысль, Русская Жизнь, Русскія Вѣдомости հրատարակութիւնները։ Այս վերջինի ձեռնադրութիւնից արդէ. նք հասաւ 18.000 քուրքի։

ընդամենը 142.597 ռուբլի, Այդ գումարից նա մնալի է 110.414 ռուբլի, հիմնելով 187 ճաշարանների գլխավորապէս Տուլի, Րեազանի և մասամբ Սամարի նահանգներում:

Սովետականներին օգնելու նպատակով կազմած ընկերութիւններից լիւնք Խարկովի «Եղբայրութիւն» (Братство) անւանւածը, որը սովետականներին ձրի կերակրում է իւր անդամներից տոացած ամսական մօտ 1000 ռ. գումարով որի համար իւրաքանչիւր ընկեր պարտաւոր է ներս բերել ընկերութեան դրամարկը կամ ամսական ամենապակասը 2 ռ., կամ թղթախաղում տալածից 50%, թամբաքուի և խմիչկեղէնի տաածից 25%, թատրոնական վճարից 10% և կոնֆէկտի ծախքից 5%:

*
* *

17 նահանգների արտասովոր տառապեալ դրութիւնը ապացուցներ է բերել վաճառականների առասպելական ազահութեան, Ընթերցողը լրագիրներից խմացած կը լինի այն սկանդալների մասին որ տեղի են ունեցել Պետերբուրգի գումալում, — բազց երեւի չէ խմացել որ Պենդա նահանգի համար գնւած հացի վատ և կեղծած լատկութեան առիթով կազմել են 148 արձանագրութիւններ:

Սովետականներին դրամով օգնելու համար վճուեց և արդէն գլուխ են բերում հասարակական աշխատութիւններ (общественные работы), Սոցա թուամն են՝ մշակութիւն (разработка) պետական անտառների, հասարակ և խրճուղակին ճանապարհների բարելաւութիւն, 100 եկեղեցիների երկու էլեւատորների ¹⁾ և մի քանի արհեստական ջրամբարների կառուցումը: Ոմանք քննադատելով սովետականներին օգնելու այս միջոցները, հաշւում են որ լիւնքը բոլոր ձեռնարկութիւնները, արժողութեամբ մօտ 10 միլ. ռուբլի՝ աշխատանք կտան 218 հազար բանւորի (իրանց 65 հազար ձիւրի հետ) և որ դրանց ձեռքը կը հասնի ընդհանուր արժողութեան հազիւ թէ 10% և որ աւելի լաւ կը լինէր կամ 10 միլիոնը ուղղակի բաժանել 30 միլ. բնակիչ ունեցող 17 սովետականներին, կամ թէ այդ ձեռնարկութիւններից միայն օգտաւէտները ընտրել և անվապաղ կատարել տալ նահանգական ղեկավարների ու պրաւաւների պատասխանատուութեան ներքոյ:

¹⁾ Էլեւատոր կոչւում է ցորենի համար առանձին կերպով, այլ և այլ սորտերի համար յարմարեցրած և առեւտրի կենտրոնական տեղերում կառուցւած հասարակական ամբարներ, որտեղ ընդունւում է ցորենը և ծախելուց առաջ նորա տիրոջ տրւում է աղբանքի արժողութեան մի մասը իբրեւ փոխաւում: Էլեւատորի միջոցով կառավարութիւնը օգնութեան է զայիս արգելանքներդներին սոցա աղատելու համար վաշխառուների ճանկերից:

Սովի մասին խօսքը վերջացնելու համար լինենք որ, բացի 12 միլիոնանոց երկու վիճակախաղութիւններից, կազմւած էր նաև մի առանձին կոմիտէտ նւէրներ ընդունելու համար՝ նախագահութեամբ Թադաթառանգի:



Բժշկական ղեկարարամենտի ամենալն տարի հրատարակած պաշտոնական ցուցակից երևում է որ 1890 թ. Ռուսաստանի բոլոր բժիշկների թիւը հասնում էր 18.694, Սակաւն անցեալ 91 թ. ընդունւած լինելով մի նոր ձև ցուցակների կազմելու՝ երևաց որ բժիշկների թիւը ամբողջ Ռուսաստանի մէջ ոչ անլի է քան 12.185, Լրագիրները ալդ նոր ցուցակի մէջ շատ բժիշկների անուններ չը գտնելով—ապացուցեցին դրանով նոր ցուցակի անկատարութիւնը, Եթէ ընդունելու լինենք սակաւն բժիշկների թիւը 18 հազար, ասել է թէ Ռուսաստանում (100 միլիոն բնակիչ ենթադրելով) 18 բժիշկ է ընկնում 100 հազար հոգու վրա:

Եթէ լինեալ 18 հազարից դուրս դանք միաւն քաղաքներում ապրող բժիշկների թիւը, կը տեսնենք որ գիւղացի ազգաբնակութեան մէջ 18 բժիշկ երբէք չի հասել 100 հազար մարդու:

Եթէ համեմատելու լինենք եւրոպական ազգերի հետ՝ եղած վիճակագրական թւերի համաձայն ¹⁾ կ'երևալ որ ամենալերջին տեղը Ռուսաստանին է պատկանում:

Այսպէս՝ հարկւր հազար հոգու համարում են՝

Շվեյցարիալում	75	բժիշկ
Իտալիալում	60	»
Անգլիալում	58	»
Հոլլանդիալում	43	»
Բելգիալում	42	»
Ֆրանսիալում	39	»
Գերմանիալում և չ	32	»
Աւստրիալում	31	»
Սպանիալում	31	»
Հունգարիալում	24	»
Ռուսաստանում՝ միջին թւով	15	»

Դեննք ալտոնդ նաև մի ուրիշ աղիւսակ, ալն է ըստ տարածութիւնների, որից զարձեալ կ'երևալ որ վերջին տեղը պատկանում է Ռուսաստանին: 1 բժիշկին համարում է՝

¹⁾ Bulletin de l'Institut international de statistique.

Բեղիկալում	13	քառասույսի կիլոմետր ¹⁾
Անդլիկալում }	16	" "
Խոսկիկալում }	16	" "
Հսկանդիկալում	18	" "
Շեկցարիկալում	19	" "
Գեթմանիկալում	31	" "
Աստարիկալում	41	" "
Սպանիկալում	96	" "
Եւրոպ. Ռուսաստանում ²⁾	368	" "
Ամբողջ Ռուսաստանում ²⁾	1496	" "

Թէ արդէս թէ արեւելս Ռուսաստանը բռնում է ամենափերջին տեղը և իզուր է արն դանդաղը թէ բժշկներն մրցումը շատ շատ է, Խակոթիւնը սա է որ բժիշկները անհասարակ կերպով են փուած առաւելապէս կենտ. բոնանալով քաղաքներում և զանց առնելով գիւղերը և աւանները:

*
* *

1891 թ. վերջերքում հրատարակած հաշվառութիւնից երևում է որ ուսն ծխական հոգևոր ուսումնարանների թիւը հասնում էր $8\frac{1}{2}$ հազարի՝ 300 հազար աշակերտներով:

Այս թւերին կից եթէ դենք ամբողջ Ռուսաստանի բոլոր տարրական ուսումնարանների թիւը, արն է մօտ 39 հազար, ուր ուսանում են մօտ 1 միլիոն երեխա, կարելի է եզրակացնել որ հոգ. ուսումնարանների թիւը= $\frac{1}{3}$ եւսանողների թիւը= $\frac{1}{3}$ ընդհանուր թւերի:

Հոգևոր իշխանութեան հսկողութեան տակ են նաև $9\frac{1}{2}$ հազար գրադիտութեան ուսումնարաններ (школы грамоты) 173 հազար երեխաներով: Այնուհետև նոյն իշխանութեան հսկողութեան տակ են միջին և բարձրագոյն ուսումնարաններից՝ 4 ակադեմիա՝ 789 ուսանողներով և 55 սեմինարիաներ 16 հազար ուսանողներով և 184 հոգևոր ուսումնարաններ մօտ 29 հազար աշակերտներով:

*
* *

1861 թւից մինչև 1870 դատաստանական հետեւալ վիճակագրական թւեր են հրատարակած Նորերումս ⁴⁾ Ռուսաստանի հին և նոր դա-

¹⁾ Կիլոմետր=1000 մետր, $1\frac{1}{10}$ արշին=1 մետր:

²⁾ Սրա տարածութիւնն է 4.846.000 ք. վերստ=5.515.000 քառ. կիլոմետր:

³⁾ Եւրոպական և Ասիական Ռուսաստանի տարածութիւնը=19.713.000 քառ. վերստ=22.434.000 քառ. կիլոմետր:

⁴⁾ В. Новиковский: Опыт подведения итоговъ уголовн. статистики 1861—1871 г. г.

տարանների գործունէութեան մասին: Այդ 10 տարւայ ժամանակամիջոցում դատի էին կանչւած 354 հազար անձեր, որոնք մեղադրուած էին կեանքի առողջութեան, ազատութեան, պատւի դէմ ոճիր գործած լինելու համար: Այս թւից դատապարտուել են 85 հազար հոգի: Մասնաւոր սեփականութեան դէմ ոճրագործների թիւն էր 1:161 հազար, որոնցից դատապարտուել են 278 հազար: Մասնաւոր վիրավորանքի դէմ մեղադրւածների թիւը եղել է 183 հազար, որոնցից դատապարտուել են 37 հազար: Կանանց պատւի և ողջախոհութեան դէմ մեղադրւածներ էին 15 հազար, որոնցից դատապարտուել են միայն 2 հազարը:

Այդ թւերից երեւում է 1) որ դատապարտւածները կազմում են համեմատաբար մի աննշան տոկոս դատի ենթարկւածների ընդհանուր թւից և 2) որ պատւի դէմ ոճիր գործածների դատապարտւածների տոկոսը ավելի քան սեփականութեան, առողջութեան և կեանքի դէմ ոճիր գործածների: Այսինքն պատւի դէմ ոճիր գործածներից մեղադրւել են $13\frac{1}{2}\%$, կեանքի դէմ— $23\frac{1}{2}\%$, սեփականութեան դէմ— 24% :

Դաւով առհասարակ դատի ենթարկւածների մեծ թիւն համեմատաբար քիչ դատապարտւածների չափի հետ—պէտք է ասել որ ռուսաց դատաստանական վերնորոգումը չը տարածւեց նախնական քննութեան (предварительное следствие) վրա: Ռուսաց աշխատանքների համաձայն նախնական քննութեան ժամանակ մարդիկ զրկւած են պաշտպաններ ունենալու իրաւունքից՝ ասել է թէ միայն դատարանում է լսւոնում նրանց անմեղութիւնը: Ռուսաց մամուլը դարձրել է կառավարութեան ուշադրութիւնը վերոլիշեալ հանգամանքի վրա:

*

* *

Նորագոյն վիճակագրական թւերից երեւում է որ ամբողջ Ռուսաստանի մուրացկանների թիւը հաշւած է մօտ 300 հազար, և որ սրանցից 158 հազարը՝ տեղական իշխանութիւնների վկայութեամբ՝ արժանի են ապաստանւելու Ընդհանուր թւից տասներորդական մասը, այն է մօտ 30 հազարը ընկնում են միմիայն Մոսկւային և սրա նահանգին: